

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

### Հայաստանի Հանրապետության կրթության եւ գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի 2009 թվականի աշխատանքային գործունեության

ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե) հաշվետու տարում իր գործունեությունը նպատակաուղղել է գիտության ոլորտում ՀՀ կառավարության 2009 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի եւ իր կանոնադրական խնդիրների կատարմանը: Միաժամանակ ձեռնարկվել են համապատասխան միջոցներ՝ աշխատանքներում տեղ գտած թերությունների վերացման ուղղությամբ:

Կոմիտեի 2009 թվականի գերակա խնդիրն էր՝ ապահովել գիտության ոլորտը կարգավորող իրավական դաշտի հայեցակարգային, ռազմավարական եւ իրավական հիմքերը:

1. ՀՀ կառավարության 2009 թվականի հունվարի 15-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը եւ գերակա խնդիրները հաստատելու մասին» N 40-Ն որոշման 1-ին հավելվածով նախատեսված 4 միջոցառումներն իրականացվել են սահմանված ժամկետներում, մասնավորապես՝

1) **«Գիտության ոլորտի զարգացման ռազմավարությունը հավանություն տալու մասին»** ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ ԿԳ նախարարի 06.10.2009թ. N21-02-09/524 գրությամբ սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ կառավարության քննարկմանը:

2) **«Հայաստանի Հանրապետությունում երկաստիճան գիտական աստիճանաշնորհման համակարգի զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին»** ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը սահմանված կարգով ուղարկվել է շահագրգիռ գերատեսչություններ՝ կարծիքների:

3) **«Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին»** ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ ԿԳ նախարարի 2009 թվականի դեկտեմբերի 8-ի N 21-06-09/1259 գրությամբ ուղարկվել է շահագրգիռ գերատեսչություններ՝ կարծիքների,

4) **«Գիտության ոլորտի զարգացման գերակա ուղղությունները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի N1302-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»** ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ ԿԳ նախարարի 2009 թվականի նոյեմբերի 30-ի N 21-02-09/651 գրությամբ սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ կառավարություն:

Բացի դրանից, զգալի աշխատանքներ են տարվել ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտի կատարելագործման ուղղությամբ, որի նպատակով մշակվել է՝ 7 իրավական ակտի նախագիծ, որոնցից 4-ի վերաբերյալ ընդունվել է ՀՀ կառավարության որոշում՝

1. ՀՀ կառավարության 2009 թվականի ապրիլի 30-ի «Հայ գիտնականների ներուժի համախմբման ծրագիրը հաստատելու մասին» N 459-Ն որոշում,

2. ՀՀ կառավարության 2009 թվականի հունվարի 8-ի «Հայաստանի Հանրապետությունում Աստղագիտության օրը նշելու մասին» N 13-Ն որոշում,

3. ՀՀ կառավարության 2009 թվականի հունիսի 18-ի «ՀՀ ագրարային ոլորտի գիտության զարգացման 2009-2013 թթ. գերակա ուղղությունների հայեցակարգը հաստատելու մասին» (մշակվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության հետ համատեղ),

4. ՀՀ կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 8-ի «Բարձր էներգիաների ստերեոսկոպիկ համակարգ» (H.E.S.S.) միջազգային համագործակցությանը «Ա. Ի. Ալիխանյանի անվան Երևանի ֆիզիկայի ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության անդամակցությունը շարունակելու համար վճար կատարելու մասին» N 1150-Ն որոշում,

5. «Գիտական կենտրոնների ձեւավորմանը հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծ (ներկայացված է ՀՀ կառավարություն/, ըստ որի նախատեսվում է 2010 թ.-ին ստեղծել Հայկենսատեխնոլոգիա, Երկրաֆիզիկական մոնիթորինգի, ԵրՃՇՊՀ ջրային հիմնահարցերի եւ հիդրոտեխնիկայի, Ռազմաբժշկական գիտական կենտրոնները),

6. Գիտության մասով ՀՀ 2010 թ. պետական բյուջեի նախագիծը եւ 2010-2012 թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը,

7. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. նոյեմբերի 17-ի NN 1121, 1122 եւ 1123 որոշումներում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին», ինչպես նաեւ «Գիտական եւ գիտատեխնիկական գործունեության բազային, պայմանագրային (թեմատիկ), նպատակային-ծրագրային ֆինանսավորման, գիտական փորձաքննության եւ գիտական փորձաքննություն իրականացնող փորձագետների համակարգի ձևավորման, գիտական ծրագրերի եւ թեմաների հայտերի երաշխավորման ու հաշվետվությունների ընդունման հանձնաժողովի ձևավորման եւ աշխատանքի կազմակերպման կարգերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը (ներկայացված է ՀՀ կառավարություն):

### **Գիտության ոլորտի բարեփոխումներ**

2009 թվականի ընթացքում կոմիտեն իրականացրել է նաեւ միջոցառումներ գիտության ոլորտի բարեփոխումների ուղղությամբ: Այդ թվում՝

1. Համաձայն ՀՀ կառավարության 2009 թվականի ապրիլի 30-ի «**Հայ գիտնականների ներուժի համախմբման ծրագիրը հաստատելու մասին**» N 459-Ն որոշման հավաքագրվել, մուտքագրվել, կոդավորվել են հայ գիտնականների տվյալները: Ստեղծվել է տվյալների շտեմարան /շտեմարանում ընդգրկված են ավելի քան 5000 գիտնականների տվյալներ/, ստեղծվել է արտասահմանում աշխատող հայ գիտնականների տվյալների շտեմարան /ընդգրկված են ավելի քան 1000 գիտնականների տվյալներ/: Շտեմարանում ընդգրկված տվյալները կիրառվել են գիտական փորձագիտական անկախ համակարգի գործարկման ժամանակ:

2. Կազմակերպվել են գիտական ծրագրերի մրցույթներ՝

- համաֆինանսավորման սկզբունքով անցկացվող գիտական ծրագրերի մրցույթ՝ ՀՀ կրթության եւ գիտության նախարարության եւ Գիտական հետազոտությունների ազգային կենտրոնի (Ֆրանսիա) միջեւ կնքված պայմանագրի շրջանակներում: Արդյունքում ընտրվել են ինը երկկողմ փոխգործակցության /5000-ական եվրո/, երկու միացյալ միջազգային լաբորատորիաների /8000-ական եվրո/ եւ մեկ գիտահետազոտական խմբի կազմավորման /4000 եվրո/ ծրագրեր:

- Երիտասարդ գիտաշխատողների համատեղ մրցույթ՝ «Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր-2009»-ի շրջանակներում: Արդյունքում ԱՄՆ քաղաքացիական հետազոտությունների եւ մշակումների հիմնադրամը, Գիտության եւ առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամը եւ կոմիտեն համատեղ ֆինանսավորելու են 11 ասպիրանտական եւ 8 խմբային ծրագրեր, իսկ կոմիտեն առանձին՝ 9 ասպիրանտական եւ 8 խմբային ծրագրեր:

3.Իրականացվել է ՀՀ գիտական եւ գիտատեխնիկական գործունեություն իրականացնող կազմակերպությունների անձնագրային տվյալների, այդ թվում՝ գիտական աստիճան ունեցող աշխատակիցների տվյալների հավաքագրում, մշակում և եռամսակային պարբերականությամբ համապատասխան բազայի թարմացում, այդ տվյալների հավաքագրում, վերլուծություն եւ հրապարակում:

4.Կոմիտեի ֆինանսական աջակցությամբ 2009 թվականի ընթացքում կազմակերպվել է 4 երիտասարդական դպրոց, ֆինանսավորվել է 41 գիտական գործուղում, 20 գիտաժողով:

5.Կատարվել են ուսումնասիրություններ եւ ներկայացվել են առաջարկություններ գիտական աշխատողների եւ գիտական կազմակերպությունների գործունեության արդյունավետության գնահատման մեթոդաբանության եւ համապատասխան չափանիշների ու չափորոշիչների մշակում:

5. Կոմիտեում կազմակերպվել են տարբեր թեմաներով քննարկումներ, կլոր սեղաններ, սեմինարներ, որոնց մասնակցել են պետական պաշտոնյաներ, գիտական հանրության և այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ: Մասնավորապես՝ կոմիտեում ներկայացվել է Ազգային մրցունակության 2009 թվականի ծրագիրը, «Մինքրոտրոնային ճառագայթման օգտագործման կենտրոնի «Քենդլ նախագծի բիզնես-պլանը» եւ Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի հեղինակային խմբի կողմից մշակված Կիսահաղորդչային նանոէլեկտրոնիկայի գիտահետազոտական կենտրոն ծրագիրը, անցկացվել է «Գիտելիքի առևտրայնացում. Ինովացիոն ենթակառուցվածքների դերը գիտություն-տնտեսություն կապի մեջ» թեմայով վերլուծություն եւ սեմինար, ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի եւ «Տրանսֆեր Տեքնոլոջի» ասոցիացիայի միջեւ համագործակցության մասին համաձայնագրի շրջանակներում հետազոտությունների ու մշակումների առևտրայնացման, տեխնոլոգիաների փոխանցման խնդիրներին նվիրված մեկնարկային կլոր սեղանը,

Կոմիտեի աշխատակիցները մասնակցել են «Հեղուկ ռադիոակտիվ թափոնների վերամշակման Ծրագրի», «Մագնեզիումի արտադրության նոր արդյունավետ տեխնոլոգիայի ստեղծման համալիր

Ծրագրի» քննարկումների կազմակերպման և համապատասխան եզրակացությունների պատրաստման աշխատանքներին, ՀՀ ԳԱԱ-ի կողմից կազմակերպված «Համագործակցության երկրների ինովացիոն զարգացում. ռազմավարություն և հեռանկարներ» թեմայով գիտաժողովին:

## **Գիտական և գիտատեխնիկական ոլորտում համագործակցություն**

Կոմիտեն զգալի աշխատանք է կատարել՝ գիտության ոլորտում տարբեր երկրների և միջազգային կազմակերպությունների հետ փոխշահավետ ու համակարգված համագործակցության կազմակերպման ուղղությամբ: Մասնավորապես՝

1.Ֆրանսիայի գիտական հետազոտությունների ազգային կենտրոն՝

2009 թվականի հունվարի 20-ին կնքվել է համագործակցության համաձայնագիր ՀՀ ԿԳՆ-ի և Ֆրանսիայի գիտական հետազոտությունների ազգային կենտրոնի միջև, որի շրջանակներում անցկացվել է գիտական հետազոտությունների ոլորտում երկկողմ գործակցության ծրագրերի բաց մրցույթ:

2009 թվականի հոկտեմբերի 28-ին ստորագրվել է պայմանագիր՝ «ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի և Ֆրանսիայի Հանրապետության գիտական հետազոտությունների ազգային կենտրոնի հետ համատեղ միջազգային միացյալ լաբորատորիա հիմնելու մասին» :

2.Միջազգային գիտատեխնիկական կենտրոն՝

ՄԳՏԿ կողմից 2009 թվականի ընթացքում հավանության են արժանացել շուրջ 1 մլն 200 հազար ԱՄՆ դոլար արժողությամբ ՀՀ-ից ներկայացված ծրագրեր: 2009 թվականի ապրիլի 1-ին ստորագրվեց նաև փոխըմբռնման հուշագիր՝ ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի և Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի միջև ՀՀ տարածքում իրականացվող «կանոնավոր» նախագծերի համաֆինանսավորման մասին:

3. ԱՄՆ քաղաքացիական հետազոտությունների և մշակումների հիմնադրամ /CRDF/, Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամ /NFSAT/՝

2009 թվականի սեպտեմբերի 8-ին կնքվել է համատեղ գործունեության պայմանագիր՝ ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի և Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի միջև, համաձայն որի 2009 թվականի սեպտեմբերի 30-ին «Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր-2009»-ի շրջանակներում հայտարարվեց երիտասարդ գիտաշխատողների համատեղ մրցույթ: Արդյունքում՝ համատեղ ֆինանսավորվեցին 11 ասպիրանտական և 8 խմբային ծրագրեր, իսկ ԳՊԿ-ի կողմից առանձին՝ 9 ասպիրանտական և 8 խմբային ծրագրեր:

2.«Տրանսֆեր տեքնոլոջի» ասոցիացիա՝

2009 թվականի հոկտեմբերի 12-ին կնքվել է համագործակցության համաձայնագիր՝ ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի եւ «Տրանսֆեր տեքնոլոջի» ասոցիացիայի միջեւ: Արդյունքում կազմակերպվել են կլոր սեղաններ, քննարկումներ:

### 3.«Նորավանք» գիտակրթական հիմնադրամ՝

2009 թվականի հոկտեմբերի 21-ին կնքվել է համագործակցության համաձայնագիր՝ ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի եւ «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի միջեւ: Համատեղ կազմակերպվել է երիտասարդական աշնանային դպրոց:

### 4.Լեռնային Ղարաբաղ՝

2009 թվականի նոյեմբերի 15-ին ստորագրվել է համագործակցության պայմանագիր՝ ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի եւ ԼՂՀ կրթության եւ գիտության նախարարության միջև: Նախատեսվում է իրականացնել բնագիտական, տեխնիկական եւ հումանիտար գիտությունների բնագավառներում իրագործվող հիմնարար, կիրառական բնույթի համատեղ աշխատանքներ, համատեղ ֆինանսավորել անկախ փորձաքննության արդյունքների հիման վրա մրցութային հիմունքներով ընտրված գիտական հետազոտությունների նախագծեր, աջակցել երիտասարդ գիտնականների կողմից իրականացվող գիտահետազոտական աշխատանքներին, կադրերի վերապատրաստմանը, համատեղ անցկացնել գիտաժողովներ, դասընթացներ, սեմինարներ եւ այլ գիտական միջոցառումներ:

### 5.Սեւծովյան համագործակցություն /BSI/՝

Նպատակ ունենալով զարգացնել Հայաստանի կապերը տարածաշրջանային, եվրոպական եւ ողջ աշխարհի գիտական հասարակության հետ՝ ՀՀ կառավարությունը գիտության պետական կոմիտեի միջոցով մասնակցել է BSI նախագծի շուրջ կազմակերպվող քննարկումներին եւ կատարել է համաֆինանսավորում՝ նպատակային ծրագրով ֆինանսավորելով GRID ծրագիրը, ինչը հնարավորություն է ընձեռում ՀՀ եւ տարածաշրջանի մոտ 240 գիտահետազոտական ինստիտուտների՝ կապ հաստատելու միմյանց հետ:

### 6.Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտ՝

2009 թվականի ընթացքում սերտ համագործակցություն է ծավալվել նաև ՌԴ ՄՀՄԻ-ի հետ, մասնավորապես քննարկվել եւ մշակվել է Երևանում ինովացիոն կենտրոն ստեղծելու ծրագիրը, նոր լուծումներ են ստացել հայաստանցի գիտաշխատողներին Դուբնա գործուղելու հարցերը, որոշվել է տարեկան 2 ասպիրանտ եւ մագիստրոս գործուղել Դուբնա՝ հետազոտություններ իրականացնելու համար:

1.Վերլուծվել է համապատասխան առաջարկություններ են ներկայացվել Լատվիայի Հանրապետության, Մոսկվայի, Դոնի Ռոստովի, Կրասնոդարի մարզերի հետ գիտության ոլորտում համագործակցություն ծավալելու, ինչպես նաև ԱՊՀ համապատասխան կառույցների հետ համագործակցությունը զարգացնելու նպատակով:

2.Ուսումնասիրվել եւ ներկայացվել են հաշվետվություններ Հայաստանի Հանրապետության եւ Եվրամիության, ԱՊՀ ու Ռուսաստանի Դաշնության համապատասխան կառույցների միջև գիտության ոլորտում ընթացող համագործակցության մասին:

3. Մշակվել է ՀՀ շահագրգիռ գերատեսչությունների հետ համաձայնեցվել են «ՀՀ կառավարության և Թուրքմենստանի կառավարության միջև գիտատեխնիկական համագործակցության մասին» համաձայնագրի նախագիծը:

4. Մշակվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության և Արաբական Միացյալ Էմիրությունների կառավարության միջև գիտատեխնիկական համագործակցության մասին» համաձայնագրի նախագիծը:

### **Կոմիտեի ընդհանուր ցուցանիշները**

«Հայաստանի Հանրապետության 2009թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսվել է իրականացվել են՝ Կոմիտեի գործունեության համար՝ 78 234.5 հազ. դրամ, իսկ թվով 10 գիտական ծրագրի համար՝ 7 402 944.2 հազ. դրամ հատկացումներ: Վերոնշյալ ծրագրերով նախատեսված աշխատանքները հաշվետու ժամանակաշրջանում հիմնականում իրականացվել են:

2009 թվականին կոմիտեի աշխատանքների թափանցիկության ապահովման նպատակով կազմավորվեց կոմիտեի կայքը /www.scs.am/, որում կարելի է գտնել բազմապիսի տեղեկատվություն կոմիտեի գործունեության տարբեր բնագավառների մասին: Կայքը հնարավորություն է տալիս ստանալ տեղեկատվություն կոմիտեի աշխատակազմի, գիտության ոլորտը կանոնակարգող իրավական ակտերի, գիտության բյուջետային հատկացումների, մամուլում տեղ գտած հրապարակումների, ինչպես նաև կոմիտեի կողմից կազմակերպվող մրցույթների հայտարարությունների, մրցութային պայմանների մասին: Բացի այդ, կայքի միջոցով քաղաքացիներն արդեն հնարավորություն ունեն նամակներ ուղարկել կոմիտեի համապատասխան բաժիններին:

Կոմիտեի կողմից կատարվել է լրատվամիջոցների ներկայացուցիչների՝ մեկ տարի ժամկետով հավատարմագրում՝ համաձայն «ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեում լրագրողների հավատարմագրման» կարգի և կազմակերպվել է նրանց ընթացիկ աշխատանքը նախարարության գործունեությունը լուսաբանելու, անհրաժեշտ պարզաբանումներ ստանալու, հարցազրույցներ անցկացնելու, հեռուստառադիոհաղորդումներ պատրաստելու և այլ հարցերում, ինչի արդյունքում՝ 2009 թվականի ընթացքում կոմիտեի գործունեության վերաբերյալ եղել է 11 հեռուստառեպորտաժ, 9 ռադիոհաղորդում, 250 հոդվածի և տեղեկատվական նյութերի տպագրում:

Կոմիտեի աշխատակազմում ներդրվել է «Մարդկային ռեսուրսների կառավարման տեղեկատվական համակարգ» համակարգչային ծրագիրը, ձեռնարկվել է Կոմիտեի աշխատակիցների և Աշխատակազմի քաղաքացիական ծառայողների անձնական գործերի էլեկտրոնային ամբողջական բազան:

2009 թվականի ընթացքում քաղաքացիական ծառայության մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով համալրվել է կոմիտեի աշխատակազմի քաղաքացիական ծառայության 1 առաջատար թափուր պաշտոն, վերապատրաստվել են 12 քաղաքացիական ծառայողներ:

Հաշվետու ժամանակաշրջանում կոմիտեի քարտուղարությունում մուտքագրվել է 1946 գերատեսչական գրություն եւ 246 նամակ քաղաքացիներից: Առաքվել է 650 գերատեսչական եւ 169 դիմումի պատասխան գրություններ:

Կազմակերպվել են կոմիտեի նախագահի եւ աշխատակազմի ղեկավարի 48 խորհրդակցություն, միջգերատեսչական եւ աշխատանքային հանձնաժողովների 18 նիստ:

### **Կոմիտեի 2010 թվականի գործունեության արդյունավետության բարձրագույն ուղիների մասին**

ՀՀ կառավարության 2010 թվականի գործունեության միջոցառումների ծրագրով սահմանված դրույթներից բացի 2010 թվականին գիտության պետական կոմիտեն նախատեսում է նաեւ՝

- կնքել համագործակցության պայմանագրեր Ռուսաստանի, Բելառուսի եւ Գերմանիայի հետ,
- հայտարարել հանրապետական դրամաշնորհային մրցույթներ, որին կմասնակցեն նաև Ղարաբաղի գիտնականները,
- սերտ գործունեություն ծավալել Սեւծովյան համագործակցության շրջանակներում,
- մշակել հայագիտության զարգացման 5-ամյա ծրագիրը, գիտության ոլորտի ռազմավարության 5-ամյա ծրագրերը,
- գիտության եւ առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի հետ համատեղ ընդգրկվել միջազգային գիտատեղեկատվական ցանցում,
- սերտ համագործակցություն է նախատեսվում Քենդլ ծրագրի շրջանակներում:

### **Թերությունները, չկատարված աշխատանքները և պատճառները**

Հանրապետության գիտության ոլորտում տեղի ունեցած նկատելի դրական տեղաշարժի հետ մեկտեղ դեռեւս կան չլուծված խնդիրներ եւ բացթողումներ:

1. 2009 թվականի մշակվել եւ ռուսական ու բելառուսական կողմերի հետ համաձայնեցման են ներկայացվել «ՀՀ կրթության և գիտության նախարարության եւ Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամի միջև համագործակցության մասին» եւ «ՀՀ կրթության և գիտության նախարարության եւ Բելառուսի Հանրապետության գիտության եւ տեխնոլոգիաների պետական կոմիտեի միջև գիտատեխնիկական բնագավառում համագործակցության մասին» համաձայնագրերի նախագծերը: Սակայն համաձայնագրերը չեն հաստատվել համագործակցող կողմերի բյուջետային հատկացումների սղության պատճառով: Համաձայնագրերի կնքումը հետաձգվել է 2010 թվական :

2. 2009 թվականին մշակվել եւ ՀՀ կառավարություն է ներկայացվել «Գիտական կենտրոնների ձեւավորմանը հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման

նախագիծը, որի շրջանակներում ստեղծվելու էին Հայկենսաստեխնոլոգիա, Երկրաֆիզիկական մոնիթորինգի, ԵրՃՇՊՀ ջրային հիմնահարցերի եւ հիդրոտեխնիկայի, Ռազմաբժշկական գիտական կենտրոնները: Կենտրոնների ստեղծման վերաբերյալ որոշման ընդունումը եւս հետաձգվել է բյուջետային հատկացումների կրճատման հետեւանքով: